Հաստատում եմ

Նաիրի համայնքի ղեկավար

_____Ն. Սարգսյան

<<07>> մայիս 2024թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/1>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի կարիքների համար փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 20 -ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները. <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/1>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով երկու հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<Լեյվլ>> ՍՊԸ և Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ կոնսորցիում	andreumro@mail.ru հեռ.093-36-28-14	000237888
2	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	Lilit87-95@rambler.ru հեռ. 093-50-08-01	000237892

6. Հայտով ներկայացված գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 Նաիրի համայնքի կարիքների համար փողոցների փոսային նորոգում				
1	<<Լեյվլ>>ՍՊԸ և Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ կոնսորցիում	108 303 500	21 660 700	129 964 200
2	<<Լիլիթ-87>> ՍՊԸ	124 000 000	24 800 000	148 800 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 3-ի թիվ 3 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<Լեյվլ>>ՍՊԸ և Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ կոնսորցիումը:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/1>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1

2024 թվականի մայիսի 3-ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ <<Լեյվլ>>ՍՊԸ և Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ կոնսորցիումի , որը գտնվում է գ. Ծովքար, 6-րդ փողոց 5-րդ փկղ, տուն 5/ ք.Մարտունի, Երևանյան 117/ հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի կարիքների փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-24/1>>:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 129 964 200 (մեկ հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան

*(Ստացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)